

ЗАО
"ГОСУДАРСТВЕННАЯ
ВНЕВЕДОМСТВЕННАЯ
ЭКСПЕРТИЗА ПРОЕКТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ"

«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԲԸ

"THE STATE NON
DEPARTMENTAL EXPERT
COMMISSION FOR
CONSTRUCTION DESIGNS
OF REPUBLIC OF
ARMENIA " CJSC

0078 Ереван, Комитаса 54б

0078 Երևան, Կոմիտաս 54բ

St. Komitas 54b, Yerevan

01.04.2025թ. № Հայր 72

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
գլխավոր քարտուղար
պարոն Գ. Եղիազարյանին

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի տնօրեն
պարոն Գ. Ազիզյանին

Դիտարկելով ՀՀ Տավուշի մարզի գ.Դովեղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցում (հենապատի կառուցում). Անավարտ շինարարական օբյեկտի մնացորդային շինարարական աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննության» ՓԲԸ-ն երաշխավորվում է դրանց համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջերին:

Անավարտ շինարարական օբյեկտի մնացորդային շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 343,800.3 հազար դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Արդիր՝ փորձաքննության եզրակացությունը 2 օրինակից, յուրաքանչյուրը 3 թերթ:

Գործադիր տնօրեն

 Գ. Արշակյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

(Պետական լիցենզիա ՔՊԼ- 000563, 1-ին դաս)

Հաստատում եմ՝

«ՀՀ նախագծերի պետական
արտագերատեսչական
փորձաքննություն» ՓԲԸ-ի
գործադիր տնօրեն

Գ. Մանուկյան
« 01 » _____ 2025թ.


ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզի գ. Դովեղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի
կառուցում (հենապատի կառուցում).

Անավարտ շինարարական օբյեկտի մնացորդային շինարարական աշխատանքների
նախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ

Պատվիրատու

ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Նախագծող

«Հայնախագիծ» ԲԲԸ
Լիցենզիա ՔՊԼ-001087, 1-ին դաս

Անավարտ շինարարական օբյեկտի նախահաշվային փաստաթղթերի կազման
համար հիմք է հանդիսացել պատվիրատուի կողմից տրամադրված մնացորդային
շինարարական աշխատանքների ծավալաթերթը:

Աշխատանքների ներկայացված նախահաշվային արժեքը կազմել է 343,800.3
հազար դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Հաշվարկը կատարված է ՀՀ կառավարության 17.10.2024թ. №1656-Ն որոշմամբ
հաստատված «Շինարարական աշխատանքների գնագոյացման նախահաշվային
նորմերի ու դրանց կիրառման կարգի» համաձայն:

Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 283,216.0 դրամ:

Աշխատավարձի անցումային ինդեքսն ընդունված է 1636.1, մեքենաների
շահագործման ինդեքսը՝ 3138.23:

Նյութերի արժեքը հաշվարկված է ՀՀ ֆինանսների նախարարության 2025թ. փետրվար ամսվա «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով:

Նախահաշվային արժեքը ներառում է հետևյալ ծախսերը՝

- վերադիր ծախսեր՝ 13.3%,
- շահույթ՝ 11%,
- ժամանակավոր շենքեր և կառույցներ՝ 1.5%,
- կլիմայական պայմանների ազդեցություն՝ 0.8%,
- տարածքի մաքրման և գոյացած աղբի տեղափոխման ծախսեր՝ 0.15%,
- տեխնիկական հսկողություն՝ 1.2%,
- հեղինակային հսկողություն՝ 0.6%,
- չնախատեսված ծախսեր՝ 2.0%,
- ԱԱՀ՝ 20.0%:

Նախահաշվարկը կատարված է պատվիրատուի կողմից տրամադրված անավարտ օբյեկտի մնացորդային շինարարական աշխատանքների ծավալաթերթ հիման վրա:

Ամփոփ նախահաշվում ՀԷՑ-ին միանվագ վճարի հաշվարկը 400կվտ հզորության համար ընդունված է ՀԷՑ-ի սակագների համաձայն:

Դիտարկելով ներկայացված հաշվարկները նշվում է՝.

1. Սարքավորումների արժեքները գնահատել հաշվի առնելով փոխադրման 12.9% և պահեստավորման 2.0% ծախսերը:

Փորձաքննության ընթացքում՝ համաձայն վերոնշյալ դիտողությունների, նախահաշվային փաստաթղթերում կատարվել են համապատասխան ուղղումներ:

Անավարտ շինարարական օբյեկտի մնացորդային շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 343,800.3 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ-ն :

Եզրակացություն՝

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի գ.Դովեղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցում (հենապատի կառուցում). Անավարտ շինարարական օբյեկտի մնացորդային շինարարական աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Անավարտ շինարարական օբյեկտի մնացորդային շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 343,800.3 հազար դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Փորձագետ՝ Մ. Սահակյան:

Գլխավոր ինժեներ



Ա.Հովսեփյան